ՎԿԱՅԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՍՆՆԴԱԴՐՈՇՄԻ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Եթե ունեք հարցեր կամ լրացուցիչ տեղեկության կարիք ունեք այս գործողության վերաբերյալ, խնդրում ենք դիմել Ձեր աշխատողին:

- Գործի անվանումը՝
- Գործի համարը՝
- Շրջանը՝
- Աշխատողի անունը՝
- Հեռախոսահամարը՝
- Ծանուցագրի ամսաթիվը՝

---

1. Ձեր Սննդադրոշմի Վկայագրի ժամկետը կավարտվի _____ թ.-ին: Եթե ցանկանում եք շարունակել սննդադրոշմներ ստանալ, պետք է նոր դիմումածև լրացնեք և մինչև Ձեր վկայագրման ժամկետի ավարտը պայմանունակ ճանաչվեք:

2. Դուք հանդիպման օրվա և ժամի մասին տեղեկացնող առանձին նամակ կստանաք: Անմիջապես զանգահարեք Ձեր աշխատակցին, եթե այս ծանուցագիրը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում չստանաք հանդիպման մասին նամակը:

3. Եթե լրացնում եք Եռամսյա Տեղեկանքը, պետք է հանձնեք լրացված Եռամսյա Տեղեկանքը (QR 7) ոչ ուշ քան տվյալ հաշվետու ամսվա 11-ը՝ սննդադրոշմների հնարավոր հետաձգումից խուսափելու համար:

Եթե Դուք կամ Ձեր լիազորված ներկայացուցիչը չեք կարող վերստին դիմել անձամբ ներկայանալով, զանգահարեք վարչաշրջան հետևյալ հեռախոսահամարով՝_____:
Մենք կկազմակերպենք, որ Ձեզ կամ Ձեր լիազորված ներկայացուցչի հետ հեռախոսով հարցազրույց անցկացնեն:

ԿԱՐԵՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

- Եթե Դուք վերստին դիմեք ավելի ուշ, քան վերոհիշյալ #1-ում նշված ամսաթիվը, ստիպված կլինեք սպասել 30 օր, մինչև Ձեր դիմումի հետ կապված վերջնական որոշում կայացվի: Դուք իրավունք ունեք դիմել Արագացված ծառայությունների (ES), եթե նպաստները ուշացվեն: Ինչպես նաև, հնարավոր է, որ Ձեր նոր վկայագրման ժամանակահատվածի առաջին ամսվա համար ստանաք նպաստների միայն մի մասը:
- Եթե հիմնավոր պատճառ ունեք ժամանակին չդիմելու համար, պետք է այդ մասին տեղեկացնեք վարչաշրջանի վելֆերի բաժանմունք: Եթե ուշացման համար հիմնավոր պատճառ ունեք, հնարավոր է, որ ետ ստանաք Ձեր բոլոր կորցրած նպաստները:
- Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ վարչաշրջանի վելֆերի բաժանմունքից դիմումածև ստանալու, և վարչաշրջանի բաժանմունքը պարտավոր է ընդունել Ձեր դիմումը: Դիմումը պետք է ստորագրված լինի և պարունակի ընթեռնելի անուն, հասցե և ստորագրություն կամ նշանի վավերացում:
- Ձեզ 10 օր կտրամադրվի բոլոր պահանջվող վավերագրերը ներկայացնելու համար:
- Այս գործողությունը պահանջվում է Սննդադրոշմների Ձեռնարկի հետևյալ Բաժին(ներ)ի կողմից՝ **63-504.25, 251, և .6.**

Դուք իրավունք ունեք նահանգային լսում պահանջել, եթե համաձայն չեք այս պայմաններից որևէ մեկի հետ: Նայեք այս ծանուցագրի հետևի կողմը լսումի խնդրանքի համար: